ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **22/11/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Հովսեփ Առաքելյանը, Դավիթ Դավթյանը, Ավագ Ասատրյանը, Հայկ Հակոբյանը, Աննա Ավետիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Քրիստինե Ներսիսյանը, Համիկ Ստեփանյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Նարեկ Հովսեփյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:
Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի արտահերթ նիստի օրակարգը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիա) ստանալու նպատակով 2025 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտ ներկայացնելուն համաձայնություն տալու մասին.

3) Աննա Գառնիկի Կարապետյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում վերանշանակելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 020-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2685439.3 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «եկամուտների գծով՝ 2719780.4 հազար դրամ» բառերով և թվով.
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3564731.7 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «ծախսերի գծով՝ 3599072.9 հազար դրամ» բառերով և թվով.
   3) որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի.
   4) որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի.
   5) որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ անհրաժեշտ է բյուջեում կատարել փոփոխություն, քանի որ «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ-ին պատկանող Սիսիան քաղաքի Շիրվանզադե 6 հասցեում գտնվող հանրակացարանային շենքի համար 2024 թվականի նոյեմբերի 27-ին ժամը 15:00-ին հայտարարվել է աճուրդ: Սիսիան համայնքը աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է 25000000 /քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ, որից՝ 215173 /երկու հարյուր տասնհինգ հազար հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամը աճուրդի մասնակցության վճար է:

Ավելացրեց նաև, որ բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 34341142 /երեսունչորս միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամով՝ որպես պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող դոտացիա, որը գարնանացանի մոնիթորինգի աշխատանքներն իրականացնելու և բնակիչներին փոխհատուցում տրամադրելու վճարն է:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում (սուբվենցիա) ստանալու նպատակով Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող «Սիսիան համայնքի Ույծ բնակավայր տանող ճանապարհի վերանորոգում» ծրագրային հայտին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Ջ. Մարգարյանը հարցրեց, թե ինչքա՞ն գումար է նախատեսված և համայնքի ներդրումը ինչքա՞ն է:
Ք. Ներսիսյանը պատասխանեց 116000000 /հարյուր տասնվեց միլիոն/ ՀՀ դրամ, որից՝ 64000000 /վաթսունչորս միլիոն/ ՀՀ դրամը համայնքի ներդրումն է:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-3 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

ԱՆՆԱ ԳԱՌՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 6.1-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Աննա Գառնիկի Կարապետյանին վերանշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նիստը վարող Դ. Հարությունյանը ներկայացրեց, որ որոշման նախագիծը կազմվել է ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 6.1 մասերի պահանջներով, համաձայն որի համայնքի ղեկավարի փոփոխության դեպքում համայնքի ղեկավարի տեղակալները, որպես ժամանակավոր պաշտոնակատարներ շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց պաշտոնում նոր նշանակում կատարելը կամ նոր նշանակման (վերանշանակման) կատարման համար սույն մասով սահմանված ժամկետի ավարտը: Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նոր նշանակումը կատարվում է համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձնման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Ժամանակավոր պաշտոնակատարն առանց ազատման վերանշանակվում է իր պաշտոնում կամ ազատվում է զբաղեցրած պաշտոնից նոր նշանակում կատարվելու դեպքում:
Ավագանու անդամ Ջ. Մարգարյանը հարցրեց, թե որ ոլորտը պետք է կոորդինացնի:
Դ. Հարությունյանը պատասխանեց, որ Ա. Կարապետյանը պետք է կոորդինացնի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի ու եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի ոլորտները:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 020-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 356-ից 368 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Ա. Խաչատրյանը ներկայացրեց, որ հիմնականում Գորայք բնակավայրում գտնվող հողերն են:
Ջ. Մարգարյանը հարցրեց, թե դրանք պահուստային հողե՞ր են:
Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ համայնքային հողեր են, ապօրինի մշակվող հողեր են:
Երկար քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____